

Կ-444-12.02.2014-ՏՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի 14-րդ հոդվածը 5-րդ մասից հետո լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության տարածքով օտարերկրյա պետության տարածք մատուցվող ինտերնետի տարանցիկ փոխադրման ծառայությունների համար ծառայության մատուցման վայր է համարվում այդ օտարերկրյա պետության տարածքը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վ. Մկրտչյան	Նախագծի 2-րդ հոդվածից հանել «և տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա» բառերը:	Ընդունված չէ: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում ինտերնետի տարանցիկ փոխադրման ծառայությունները հարկվում են ԱԱՀ-ով, որի արդյունքում նվազում է ինտերնետի տարանցիկ փոխադրման ծավալը: Ներկայացված օրենքով վերականգնվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթը, օրենքի ընդունման արդյունքում ետ վերադարձվելիք ավելացված արժեքի հարկի գումարներն էական չեն, և նպատակահարմար ենք համարում նշված գումարի վերադարձը:	